ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԸՆՏՐԱՆՈՒ ՎԱՐՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Միտքը չունի գաղտնիք,
որ վարքը երևան չբերի
Վ.Գ.Գյոթե

Անցումային հասարակություններում իշխանության իրականացման հիմնահարցի վերաբերյալ քաղաքական ընտրանուն ներկայացվող պահանջներն իրենց ողջ բազմազանության մեջ ենթադրում են ազգային մտահայեցողության ուսումնասիրում: Իշխանության իրականացման քաղաքակրթական փորձի հանրագումարից ակնհայտ է, որ միայն մտահայեցողություն կազմող ազգային արժեքների իմացության դեպքում կարելի է մշակել կառավարման համար արդյունավետ սկզբունքներ: Այդ նկատառումներով, տվյալ հոդվածում առանձնակի ուշադրություն է դարձված, նախ, իշխանության իրականացման ընթացքում ազգային մտահայեցողության հարատև ու համընթաց արդիականացման ապահովմանը, ապա, կառավարող ընտրանու վարքաբանությունում նրա տեղի ու դերի հարցին: «Ազգային մտահայեցողություն» հասկացությունը գերազանցապես սոցիալ-հոգեբանական բնույթ ունի[1] և իշխանական հարաբերություններում հանդես է գալիս որպես արժեքային համակարգով պայմանավորված մարդկանց կենսագործունեության կազմակերպման ձև:

Ազգի մտահայեցողությունը բարդ և բազմաբնույթ մտածական համակարգ է, որը կազմավորվում է էթնիկական հանրույթի կայացմանն ու զարգացմանը համընթաց՝ պատմական կարևորագույն իրադարձությունների ազդեցությամբ: Այն բխում է երկու ակունքից, մի կողմից՝ աշխարհագրական միջավայրի և տվյալ հանրութային տեսակի պատմամարդաբանական զարգացման (և որպես այդպիսին ենթադրում է որոշակի աշխարհաճանաչողություն և աշխարհատեսություն), մյուս կողմից՝ այլ էթնիկական հանրույթների հետ շփվելու միջոցով ձեռք բերված և վերարժևորված մշակութային ավանդույթների, սովորույթների և գաղափարների: Հետևաբար

[1] Այդ մասին հանգամանալից տես՝ *Душков Б.А.* Психология типов личности, народов и эпох. Екатеринбург: Деловая книга, 2001; *Душков Б.А.* Психосоциология менталитета и ноосменталитета. Екатеринбург: Деловая книга, 2002.

ազգային մտահայեցողությունը էթնո- և սոցիոմշակութային արժեքներ ամբարած համակարգ է, որն արժևորում ու ամփոփում է տվյալ հանրույթի կուտակած նյութական և մտահոգևոր արժեքները, վերարտադրության դարավոր փորձը՝ ամրագրելով դրանք, մասնավորապես նաև իշխանական կառույցներում, ավանդույթներում ու հոգեբանությունում: Դրանով իսկ վերջինս իր կնիքն է դնում և՛ քաղաքացու, և՛ քաղաքական վերնախավի վարքաբանության, ինքնագիտակցության և իշխանության նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա:

Ազգային մտահայեցողությունը պատմության հոլովույթի մեջ ընկալելու և ուսումնասիրելու անհրաժեշտությունը պահանջում է ճանաչել ոչ միայն անցյալի անցյալականությունը, այլև ներկայությունը: Քաղաքակրթության փորձն ապացուցում է, որ պատմականության զգացումը հանրույթին հնարավորություն է ընձեռում արժևորելու իրականությունը ոչ միայն իր կողմից իրականացվող իշխանության (հոգեբանական և արժեքային) ժառանգությամբ, այլև այն գիտակցությամբ, որ մշակութորեն համակարգված արժեքային համակարգն իր քաղաքական դրսևորմամբ ունի էթնապաշտպան նշանակություն՝ դրանով իսկ կարևոր տեղ զբաղեցնելով կառավարող ընտրանու վարքաբանության մեջ: Ակնհայտ է, որ քաղաքական իշխանության արդիականացման գործընթացում վերջինս ապահովում է համակեցական կայուն կարգ: Իսկ կարգը կայուն է, քանի դեռ առկա չէ քաղաքական արժեքի վերարժևորման անհրաժեշտություն: Նման ընկալումը հաստատում է այն միտքը, որ ներկան պետք է վերափոխի անցյալն այնքանով, որքանով վերջինս կառավարում է ներկան: Սա է ավանդույթի և արդիականացման փոխգործակցության տրամաբանական մեխանիզմը՝ ազգային մտահայեցողության արդիականացում քաղաքական կարգի պահպանման նկատառումներով:

Պատմականության այս ընկալումն ամենասուր կերպով զգացվում է այն դեպքում, երբ փորձում ենք որոշարկել ազգային մտահայեցողության տեղը քաղաքակրթական ժամանակի մեջ: Վերջինս անընդհատ վերակառուցվածքավորվում է, և էթնոսը մասնակցում է այդ արժեքաստեղծ ոգեղեն գործընթացին որպես պատմական նպատակայնություն կրող՝ ոչ միայն քաղաքականության, այլև քաղաքակրթության սուբյեկտ: Եվ նրա համար ապագան դառնում է տեսանելի, ազգային մշակույթով արժևորված կենսաէներգետիկ տարածք, որտեղ որոշիչը ոչ թե ճակատագիրը, աստվածային նախախնամությունն ու քաղաքական խաղերն են, այլ ակտիվ կենսագործունեություն ապահովող արժեքները[2] և քաղաքական ընտրանու՝ դրանք իր վարքաբանությամբ պահպանելու և բնականոն արդիականացնելու կարո-

---

[2] The Idea of Europe. Its Heritage and Future. Ed. By D.Gruender, N.Y, 1992, p. 263-264.

ղությունը: Համակարգային և սոցիոմշակութային հայեցակետի ներքո դիտարկելով սփյուռքի մտահայեցողությունը, քաղաքագետ Զ.Լևինը հատուկ ուշադրության է արժանացրել այն փաստը, որ ցանկացած սփյուռք մոլորակի տարբեր անկյուններում մնում է հավատարիմ իր քաղաքակրթական առանձնահատկություններին՝ արժեքային համակարգին, լեզվին, ավանդույթներին, կրոնին և այլն, չնայած, որ նա այլևս իր պատմական հայրենիքի քաղաքացին չէ[3]: Հենց դրանով էլ յուրաքանչյուր սփյուռք՝ էթնոպաշտպանության նկատառումներով ազգային մտահայեցողությունը դարձնում է իր վարքաբանության անբաժանելի տարրը:

Հազարամյակների պատմություն ընդգրկող ազգային մտահայեցողությունը փոխներդաշնակում է աշխարհաճանաչողության «քաոս – առասպել» արժեքային համակարգի ներհակ բևեռները: Դրանցից յուրաքանչյուրը, վերջին հաշվով, պատմական իրականության քաղաքահոգեբանական իրացման կերպ է: Մեր կարծիքով, նման ըմբռնումը հնարավորություն է տալիս հանրույթի արդիականացման գործընթացը և մշակութային ավանդույթը դիտարկել որպես փոխկապակցված իրողություններ: Իսկ դրանց լծորդման բացահայտման նպատակով անհրաժեշտ է տարբերակել իրականության ընկերային և մտահոգևոր այն չափումները, որոնք և՛ ձևավորում, և՛ բնութագրում են ազգային մշակույթի արժեքային համակարգը:

Ընկերայինն ընկալելի է հանրույթի մշակութային հոգեբանությամբ և էթնոտարբերակիչ արժեքներով ու հաստատություններով (դավանանք, իրավունք, բարոյականություն և այլն): Այս պայմաններում ազգային մտավոր արժեքները ներկայանում են որպես թե՛ ընկերային վարքաբանության առարկայական չափորոշիչներ, թե՛ համակեցությունն ամբողջականացնող խորհրդանշանային տեքստեր, թե՛ անձի, հանրույթի, ընտրանու, առաջնորդի կապը ընդհանրացնող միջոցներ: Հարաբերելով համամարդկային արժեքներին՝ ազգի արժեքային համակարգը նոր բովանդակություն ու իմաստ է ստանում և, հանդես գալով տարբեր մակարդակների «Ես»-երի լինելության սահմաններում՝ դառնում է անձի, հանրույթի ինքնության արդիականացման գործընթացը սնուցող միջավայր: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս արդիականացումը դիտարկել «հավաքական մեթոդաբանությամբ», որի օգնությամբ, մասնավորապես, կարելի է վերլուծել հայ հանրույթի քաղաքական-հոգեբանական կերպափոխությունը պատմության հոլովույթում:

---

[3] Տես՝ *Левин З.И.* Менталитет диаспоры (системный и социокультурный анализ). – М.: Институт востоковедения РАН; Изд. «Крафт+», 2001, с.102-107.

Հայոց գոյաբանության որակական փոփոխություններին զուգահեռ անհրաժեշտ է բացահայտել նաև համամարդկային և ազգային արժեքների փոխներգործության խնդիրը: Մեր կարծիքով, հայ քաղաքակրթական (և քաղաքական-հոգեբանական) միջավայրի արդիականացման գործընթացը «հավաքական մեթոդաբանությամբ» ուսումնասիրման համար հիմք կարող են ծառայել Է.Դյուրկհեյմի ընկերաբանությունը (սոցիոլոգիա), Կ.Յունգի հոգեվերլուծությունը («արքետիպեր», «խորքային հոգեբանություն»), Կ.Մանհեյմի «գաղափարի» և «ուտոպիայի» փոխհարաբերության և Է.Ֆրոմի «առողջ» ու «հիվանդ» հասարակությունների մասին տեսությունները: Դրանցից յուրաքանչյուրը, յուրովի կարևորելով կառավարող ընտրանու վարքաբանությունում ազգային մտահայեցողության տեղն ու դերը և բնականոն արդիականացման գործընթացում ծագած հիմնահարցերը՝ միաժամանակ ընդգծում է, որ տարբեր ընկերային համակեցություններ իրենց գոյաբանական կերպը պահպանելու համընդհանուր (ունիվերսալ) հատկանիշներ ունեն: Հենց այդ ունիվերսալիզմն է, որ, ըստ մեզ, հնարավորություն է տալիս ներդաշնակել Է.Դյուրկհեյմի «կոլեկտիվ գիտակցությունը» հոգեվերլուծողների (Զ.Ֆրոյդ, Կ.Յունգ) «զանգվածների հոգեբանության», «արքետիպերի» և «կոլեկտիվ ենթագիտակցականի» հասկացությունների հետ: Իսկ Կ.Մանհեյմի «գաղափար» և «ուտոպիա» ստորոգությունների (կատեգորիաների) միջոցով հնարավոր է որոշարկել հասարակության «հիվանդ» կամ «առողջ» վիճակները (Է.Ֆրոմ)[4]:

Ազգային մտահայեցողության արժեքային բևեռները

Առաջնորդվելով «հավաքական մեթոդաբանության» տրամաբանությամբ՝ նշենք, որ հին հայկական աշխարհաճանաչողության մեջ արժեքային հարացույցն ութնափուլ, ութառիթմ ծավալում ունի: Դա ակնհայտ է հայկական ժայռապատկերների, դիցաբանական և ընդհանրապես մշակութային տեքստի վերլուծությունից[5]:

Արեգակնային ծագումի տիեզերական հավասարակշռություն ապահովող ութնյակը՝ խորհրդանշելով անսահմանության մեջ ներդաշնակորեն կայացող ինքնությունը, ամբողջականացնում է հայ մշակութային համատեքստի արժեքանական (աքսիոլոգիական) բևեռները: Վերջինս ունի

---

[4] *Э. Дюркгейм.* О разделении общественного труда. Метод социологии, М., 1991; *З. Фрейд.* Введение в психоанализ. Лекции. М., 1989; *К. Юнг.* Психологические типы, М., 1996; *К. Манхейм.* Идеология и утопия (Диалог нашего времени), М., 1994; Психоанализ и культура: избранные труды К.Хорни и Э.Фромма, М., 1995.

[5] *Ն.Ադոնց* Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 287-347; *А.А.Мартиросян.* Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, с. 313; *А.А.Степанян.* Развитие исторической мысли в древней Армении. Миф, рационализм, историописание, Е., 1991, с. 251 и др.

բիոֆիլ (քաոս-արարում, սկիզբ-առասպել, ընթացք-արժեք, ավարտ-վերարժևորված արժեք), և **նեկրոֆիլ** (քաոս-ավերում, վերջ-առասպել, ընթացք-արժեքի քայքայում, վերջ-մահ կամ ողբ) բևեռները: Արարիչ (բիոֆիլ) բևեռը մարմնավորվում է պայքարն ապակառուցողական «արժեքների», դիպվածների, տարերային զարգացումների, մարգինալացնող քաղաքական խաղերի դեմ, որն էլ ռացիոնալացնում է քաղաքական ու հանրային կառավարումը: Փաստորեն, մշակվում է արարչաստեղծ գոյաբանության մեխանիզմ: Դրան հակառակ, ավերիչ (նեկրոֆիլ) բևեռը մարմնավորում է կազմալուծող, քայքայող, մահասփյուռ տարերքը: Այս հակամետ բևեռների հարադրմամբ էլ մշակութային համատեքստում ստեղծվում է «կոլեկտիվ գիտակցություն»: Այն, ենթադրելով ինքնորոշման, ինքնակառավարման, ինքնահաստատման համակարգ, համագործակցություն է իրականացնում «modus vivendi» սկզբունքներով:

Պատմական հանրույթի «կոլեկտիվ գիտակցականին» համընթաց, այս համակարգը՝ հենվելով «մեխանիկական միասնության» վրա (Է.Դյուրկհեյմ), կառավարող ընտրանու, առաջնորդի և անձի վարքաբանությունում կապ է ապահովում առասպելամտածողության ու տրամախոհական մտքի միջև: Այդ կապի արժևորմամբ մշակվել է գոյաբանության մի կերպ՝ արարիչ և ավերիչ արժեքային բևեռներով[6]:

Հեթանոս և աստվածաշնչյան արժեքային համակարգերն ամբարած հայ մշակութային համատեքստը համակարգված է նույն սկզբունքով: Եվ հայ «ես»-ին տիեզերաստեղծ աշխարհաճանաչողություն, ինքնություն ապահովող առասպելամտածողությունը ներդաշնակ ձևով փոխակերպվում է համամարդկայինի: Այս իմաստով էլ հայ էթնոսի աշխարհաճանաչողության առասպելաբանական ըմբռնումը պայմանավորում է ազգային մտահայեցողության արժեքային բևեռները:

Կենսական կողմնորոշում ունեցող առասպելն ինքնություն կերտող, անձի, ընտրանու, առաջնորդի և հանրույթի ընկերային եռանդն ակտիվացնող, խմբային միասնություն, համերաշխություն մարմնավորող, ընդհանուր արժեհոգեբանական գիտակցություն ձևավորող «արարչական» իշխանություն է: Առասպելի իմաստային դաշտը կանոնակարգում է անձի ու հանրույթի «ես» + «մենք» բևեռները և ուղիներ է մշակում «նրանք» բևեռի հետ հարաբերություններ հաստատելու համար: Այս ամենը, ինչպես նշում է Կ.Յյուբները, «հնարավորություն է տալիս ազգին միասնական վերաբերմունք մշակելու իրականացվող բազմաբնույթ իշխանության նկատմամբ»[7]:

---

[6] *Է. Ֆրոմ* Սիրելու արվեստը (թարգմ. անգլ. և մասնագիտ. խմբ.՝ Մ.Մ.Մարգարյանի), Ե., Մխիթար Գոշ, 1996:
[7] *Կ. Հյուբներ*. Истина мифа, М., Наука, 1996, с. 325.

Քաղաքակրթության փորձը վկայում է, որ տարաբնույթ իշխանական կառույցներում պետք է անպայմանորեն պահպանվի ազգի ինքնությունը ապահովող արժեքային համակարգի քաղաքական դրսևորումը: Դրա բացակայությամբ իշխանական գործընթացում խաթարվում է ցեղի միասնական հոգեբանությունը: Արդյունքում, «ես» և «մենք» բեռները անդրայնացվում (մարգինալացվում) են և, կորցնելով իրականությունը բանական գնահատելու ունակությունը՝ սկսում են իրականացնել ուծացման (ասիմիլյացիոն) տիպի կառավարում: Դա առաջ է բերում արժեքների անկում, քայքայում, քաոս, ավերում և, վերջապես, ողբ:

Իր մշակութային և քաղաքական հագեցվածությամբ ողբը համամարդկային թեմա է: Փաստորեն, պատմական հոլովույթում յուրաքանչյուր ոգեարարիչ էլիտար «ես» ողբում է իր կեցության (նաև իշխանության) արդեն կորցված և ազգային մտահայեցողության հիմք կազմող արժեքների բացակայությունը: Այս իմաստով հայոց ողբը (թեպետ իր ժանրային բազմազանության) նույնպես աներկբա քաղաքական-հոգեբանական բովանդակություն ունի: Լինելով ավերիչ (թե՛ ներքին, թե՛ արտաքին) իշխանության արդյունք՝ ողբը միտում ունի արդիականացնելու պատմությունը՝ ազգի ընկերային, հոգեբանական, քաղաքական միասնության անհրաժեշտության դիտանկյունից: Միայն այդ ճանապարհով կարելի է դիմակայել ավերիչ ներուժին: Հայոց ողբում հոգեբանորեն ամբողջացված է Ազգի և Հայրենիքի թեման[8]:

Այս իմաստով հայ ողբը ոչ միայն քրիստոնեական հավատով հարակարգված վշտի, հառաչանքի, մեղքի, զղջման, այլև ինքնության, էության պահպանման ծրագրայնություն է: Հայոց ողբի գործառույթով (Մովսես Խորենացուց մինչև մեր օրերը) ինքնորոշվել է ինքնարարող հայ հանրույթը՝ որպես համասեր, համալեզու հավաքական ընկերային հոգեբանության տեր մարդկանց միություն: Միաժամանակ այն հանդես է եկել որպես հանրույթի ինքնամաքրման նպատակին ծառայող արժեքային համակարգի քաղաքական բովանդակության արտացոլում և մեկնություն: Նմանօրինակ հիմքի վրա իրականացվող իշխանական հարաբերություններն արժեքաբանորեն ամբողջացվում են ծիսականությամբ:

Իշխանության արժևորմանը նպատակամիտված ծիսակարգը լուծում է պատմության հոլովույթում առկա և կուտակվող հակասությունները՝ արտամղելով դրանք ազգային մտահայեցողությունից անդին: Այսպիսով ապահովվում է երևույթները ներդաշնակ կապի մեջ ընկալելու հնարավորությունը, իսկ իշխանական ժամանակակարգի ծիրում հայտնված ընտրանին,

---

[8] *K. Beledian*. L'expériénce de la catastrophe dans la littérature arménienne. Revue d'histoire arménienne contemporaine, 1 (1995), p. 128.

առաջնորդը, անհատը հաղորդակցվում են ազգի միասնական հոգեբանության վեհ, հզոր, սրբազան, բայց արդեն պատմականացված և հերոսականացված ժամանակին: Հենց այս հաղորդակցմամբ էլ (մշակութային և քաղաքական ծիսակարգի միջոցով արդիականացվող) մտահայեցողությունը հաղթանակ է տանում ավերիչ քաոսի հանդեպ, և հաստատված կարգի օգնությամբ քաղաքական ընտրանին հնարավորություն է ստանում իր վարքաբանության բաղկացուցիչ կառուցվածքային տարր դարձնելով ազգային մտահայեցողությունը՝ քաղաքակրթել իշխանական հարաբերությունները:

Ծիսական արարողակարգի կայուն հատկանիշներից է նաև, այսպես կոչված, **հատվածայնությունը** (պարտիկուլյարիզմ): Դա միտված է ինքնաճանաչողության ապահովման և ենթադրում է հարատևման հեռանկար՝ չձուլվելու, տեսակը պահպանելու: Դրա գործառույթով տեսակն իրեն զատում է շրջապատից: Հայերն, օրինակ, իրենց տեսակը զատելու յուրօրինակ հարացույցներ են մշակել. Հայկն առաջինն էր, որ ընդվզեց ընդդեմ բռնապետ Բելի, Տրդատ Մեծն առաջինն էր, որ Գրիգոր Լուսավորչի համագործակցությամբ քրիստոնեությունն ընդունեց իբրև պետական կրոն, Մաշտոցն առաջինն էր, որ արարեց հայոց այբուբենը՝ ազգային արժեքի էզոտերիկ ընկալմամբ, Քաղկեդոնի ժողովում հայերն առաջինն էին, որ ընդդիմադիր կեցվածք ընդունեցին...

Եվ վերջապես, դարերի հոլովույթում հայերը միշտ էլ կարողացել են իրենց տեսակը զատել շրջապատից և դիմակայել օտարների ծրագրավորված համահարթեցմանը: Ինքնագիտակցությունը կառուցակազմում է ազգային մտահայեցողությունը և ինքնորոշում իշխանական կառույցը՝ միավորելով դրանք արարչաստեղծ գերագույն սկզբունքի՝ հանրույթի տեսակի լինելության և հարատևման հետ: Իշխանական հարաբերություններում ցեղի անհատականությունը բարձրագույն արժեք է, եզակի և անկրկնելի գոյացություն: Այս ամենն իր արտահայտությունն է գտնում ազգային խորհրդանիշներում, որոնք հանրույթի կենսաոճի և ինքնագիտակցության թանձրացումներն են: Յուրաքանչյուր հանրույթ ունի ոչ միայն իր ստեղծած, այլև փոխառված խորհրդանիշներ, որոնք դարերի հոլովույթում ազգային բովանդակություն են ստանում:

Գաղափարակիր Ես-ը մտահայեցողության մեջ

Նման հարցադրումը պահանջում է ցեղի պատմական գոյաբանությունը դիտարկել նաև իբրև արարչագործ (ընտրյալ) անհատի ինքնիրացման և մշակութաստեղծ կարողությունների կիրարկման միջավայր: Այս կապակցությամբ հույժ կարևորվում են պատմական անձի արժեհամակարգիչ պատկերացումներն ու գործողությունները, որոնք, հանրույթը զերծ

պահելով քաոսից, առաջին հերթին ապահովում են կառավարող ընտրանու կենսաոճի յուրօրինակությունը:

Սա իր արտահայտությունն է գտել հայ ժողովրդի հնագույն առասպելների և էպիկական ասքերի մեջ: Դրանք գրի է առել և ապա տրամախոհական մշակման ենթարկել պատմահայր Մովսես Խորենացին: Նա ստեղծել է ազգի կեցության ու ինքնակառավարման տարողունակ հարացույցներ, որոնցում իշխանության շրջափոխությունը դիտարկվում է միաժամանակ և՛ առասպելամտածողության, և՛ տրամախոհական մտակառույցի շրջանակներում:

Շարադրելով հայոց պատմությունը վաղնջական ժամանակներից մինչև իր դարաշրջանը՝ Հայկ նահապետից մինչև Արշակունիների արքայատան անկումը (428թ.), Խորենացին ստեղծել է իշխանություն իրականացնող գաղափարակիր «Ես»-ի իդեալական կերպարը: Նա շարունակել է ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցի գործը և հասել «Հոգեոր Հայաստան» և «գաղափարակիր ես» ստորոգությունների ճշգրիտ հարակարգման[9]:

Այս իդեալը Պատմահայրը մարմնավորել է առաջին հերթին հայոց վաղ թագավորների կերպարներում, որոնք թշնամիների դեմ պայքարում դնելով հայոց պետականության հիմքերը, դրանով իսկ բացահայտեցին իրենց ընտրյալությունը: Հատկանշական է, որ ոչ մի քրիստոնյա կառավարիչ չի արժանացել այնքան բարձր գնահատականի, որքան պետականության ծաղկման դարաշրջանի հեթանոս թագակիրները: Ընդսմին, առաջին հերթին կարևորվում է նրանց ավանդը ազգային ինքնիշխանության և պետականության ամրապնդման գործին:

Խորենացու դիտանկյունից՝ նախաքրիստոնեական շրջանից ժառանգված ազգային յուրաքանչյուր արժեք ունի իր անկախ և ուրույն կշիռը: «Ազգ-Հայրենիք-Պետություն» հոլովույթի ընկալման և տեսական բանաձևման գործում նա հեռացել է իր դարաշրջանի ընդհանուր մտայնությունից: Ազգային պետությունը նա դիտարկում է իբրև բացարձակ համակեցական արժեք: Այդու՝ նա պետականաշինությունը ճանաչում է իբրև հայ «Ես»-ի արժեքային համակարգի կարևորագույն չափումներից մեկը: Եվ ըստ քաղաքական երանգի իմաստավորելով «Ծանի՛ր զքեզ» սկզբունքը՝ գտնում է, որ «այլոց» վարքաբանությունը (և նրանց իրագործած իշխանությունը) հնարավոր է ճիշտ ըմբռնել միայն սեփական մշակութային ու իշխանական «Ես»-ի իմացության ճանապարհով:

Խորենացին բանաձևում է արարիչ (ընտրյալ) անհատի ինքնաճանաչման չափորոշիչները: Դրա նպատակն է հանրույթը հնարավորինս զերծ

---

[9] *А.А.Телунц.* Типология цивилизаций и национальный идентитет. Диалог цивилизаций: демократия и мир, Е., 2002, с. 86.

պահել քաղաքական քաոսից: Այս գործելակերպը հղում է ենթադրում առ ազգային մտահայեցողության «արխիվը» և «Ես»-ին հնարավորություն ընձեռում հարափոխվելու (ու այլանալու) ժամանակի պահանջների ազդեցությանը: Նման գործառույթի բացակայությամբ հանրույթը զրկվում է ինքնակայացման ու ինքնակառավարման հնարավորությունից՝ հանգելով «անորոշության» կամ «զգացմունքային խլության»:

Ի զորու չլինելով բանական քննության ենթարկելու և գնահատելու առկա քաղաքակրթական (և քաղաքական) կացությունը՝ հանրույթն օտարվում է. տեղի է ունենում «փախուստ իրականությունից»[10] և «փախուստ ազատությունից»[11]: Մշակութային «արխիվը» կորցնում է իր արժեքային և հոգեբանական անհրաժեշտությունը: Արդյունքում, ըստ Խորենացու, ազգը վերածվում է ամբոխի, որը չունի տարիք ու պատմություն, «զի բարձաւ թագաւոր եւ քահանայ, խորհրդական եւ ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն. դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն»[12]:

Ո՞րն է ելքը: Քաղաքակրթական փորձը հուշում է, որ նման պայմաններում առավել ներգործուն է ազգային մշակույթի ու մտահայեցողության ճշգրիտ լծորդումը նրա՝ ինքնակառավարման երկու՝ ուծական (ասիմիլյացիոն) և հարմարվողական (ակոմոդացիոն) հարացույցների համադրությանբ: Թե՛ մեկը, թե՛ մյուսն ունի գործառույթը իրատեսացնող ռեժիմ, որի կիրարկմամբ ապահովվում է համակեցական անդորրն ու հավասարակշռությունը: Սակայն բացարձակեցման պարագայում քաոսն անխուսափելի է:

Ուծական հարացույցի բացարձակեցումը, որպես կանոն, հանգեցնում է այն բանին, որ կառավարողը (կամ կառավարողները) հաշվի չի նստում կառավարվողների հետ: Չի «նկատում», որ իր (մեծ մասամբ եսակենտրոն) արժեքները չեն համընկնում հանրույթի արժեքային կողմնորոշումներին: Դրա հետևանքով ձևավորվում է համակեցական անդրային (մարգինալ) վիճակ ու հոգեբանություն: Ծրագրված փոփոխության է ենթարկվում ազգային մտահայեցողությունը, իսկ ընտրանին, առաջնորդը, անհատը կորցնելով կապն իրենց ընկերային-մշակութային երբեմնի արարիչ միջավայրի հետ, իշխանական հարաբերություններում զբաղեցնում են հարաբերականորեն ինքնուրույն տարածություններ: Նրանք և իրենց

---

[10] Համանման պատկերացումներ մշակվել են դեռևս ստոիկյան քաղաքագիտության ծիրում և առավել ցայտուն դրսևորվել Պոլիբիոսի «Համընդհանուր պատմության» մեջ: Polyb., VI, 7, 35 (*Полибий*. Всеобщая история в сорока книгах, М., 1899).

[11] *Фромм* Э. Бегство от свободы. М.; Мир, 1989.

[12] Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, III, 68 (*Մովսէս Խորենացի* Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913):

նմանները կազմում են «սև զանգվածի» (օխլոսի) մասը, որը պատրաստ է ծառայելու ցանկացած ուժեղ ձեռքի՝ ունակ բավարարելու իրենց առօրեական (առավելապես «կերակրման») պահանջմունքները[13]: Համակեցության սկզբունքներն սկսում են «կազմակերպվել» ըստ «անդրային դասերի», որոնց կառավարման համար ստեղծվում են խամաճիկային (մարիոնետային) իշխանական հարաբերություններ: Արդյունքում, ուծական կառավարման ծայրահեղ դրսևորումը ձևախեղում է ազգային համակեցական տեսակն ու մտահայեցողությունը:

Ի տարբերություն դրա, հարմարվողական հարացույցի բացարձակեցումը ենթադրում է մի այնպիսի վիճակ, երբ, ընդհակառակը, զանգվածի չափազանց ակտիվ ներգործությամբ խաթարվում են իշխանական կառույցները: Եվ հաստատվում է քաոս, որը կրկին ուղեկցվում է ազգային տեսակի ու մտահայեցողության խաթարմամբ: Բայց այս անգամ դա արդյունք է կարգի և օրենքի քայքայման: Այս դեպքում «սև զանգվածի» եսասիրությունը գերակա է դառնում իշխանական հարաբերություններում: Այդ վիճակը նույնպես քաջածանոթ է Պատմահորը. «Այլ խստասրտութիւն կամիմ ասել, թէ եւ զամբարհաւաճութիւն ազգիս մերոյ յիսկզբանցն եւ այսր. որպէս անհամբոյր բարւոյ եւ ճշմարտութեան անհարազատ, կամ թէ բնութիւն ունելով զբարձրահոնութիւն ու կամակորութիւն, ընդդիմանան կամաց թագաւորին... զհետ երթալով կամաց կանանց եւ հարճից»[14]:

Ինչպես նշվեց, ելքը երկու հարացույցների համադրման մեջ է: Խառը «ուծական-հարմարվողական» հարացույցի կիրարկման պարագայում ազգային համակեցական արժեքներն ու հաստատությունները հստակեցվում են: Հանրույթն սկսում է գիտակցել, որ (ուղղակի և հակադարձ կապի շնորհիվ) հնարավոր է երկխոսություն համակեցական բոլոր մակարդակներում՝ նպատակամիտված բարեշրջելու-բարեփոխելու ընկերային միջավայրը: Ասվածն, անշուշտ, առաջին հերթին վերաբերում է «հանրույթ-իշխանություն» հարաբերություններին: Միայն այդ պարագայում է, որ բացահայտվում է ընկերային համակեցության ճշմարիտ նպատակը, ապահովել կյանք «...վասն բարեկարգութեան եւ աննախանձոտ կենաց, որ է շինութեան եւ խաղաղութեան կենաց պատճառ, եւ ինչ նման այսոցիկ»[15]:

Եվ երկխոսությունը ծավալվում է ազգային համակեցության ոչ միայն համաժամանակյա (այժմ), այլև տարաժամանակյա հարթությունում: Ի հետևանս դրա՝ ազգը երկխոսության մեջ է մտնում իր իսկ անցյալի և տեսանելի (ու կանխագծելի) ապագայի հետ: Բազում սերունդներ խտանում

---

[13] Polyb., VI, 9, 20-25: Այս մասին մանրամասն տե՛ս *F. Walbank*. Polybius, London, 1972, pp. 138-149.
[14] *Մովսէս Խորենացի*. Պատմութիւն հայոց, II, 92:
[15] *Մովսէս Խորենացի*. Պատմութիւն հայոց, II, 8:

են ժամանակային «ներկայի» ծիրում՝ ընդհանուր գերխնդրի գիտակցությամբ: Եվ հայտնագործվում է «փոքրի ուժն ու մեծությունը»: Դրա ճշգրիտ բանաձևմամբ է, որ Պատմահայր Խորենացին շեշտում է. «Զի թէպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս...»[16]:

Հանրագումարելով նշենք, որ ազգային մտահայեցողությունը քաղաքական ընտրանու իրականացրած իշխանության կառուցակարգում որպես համակարգիչ ամբողջություն ենթադրում է՝

1. տարբեր մակարդակներում իշխանություն իրականացնող «Ես»-երի ինքնաճանաչողություն՝ քաղաքական իրականության, պատմական գիտակցության և ռացիոնալ քաղաքականության ենթատեքստում: Կառավարող «Ես»-ը, հասարակական քաոսից խուսափելու համար, անհրաժեշտաբար մտահայեցողությունում արարչորեն պետք է կրի իր մեջ պատմական արժեքները, որպես քաղաքական հոգեբանություն, ապագան՝ որպես ազգի իշխանության ինքնությանը կարգ ու տեղ ապահովող իրատես մոդել.

2. քաղաքակրթության արժեքների ներառում, որը համակեցության կանոնների պահպանմամբ բյուրեղացնելով «Ես»-ի մտահայեցողական առանձնահատկությունները, հնարավորություն է ստեղծում նրա զարգացման համար կառավարման ուծական և հարմարվողական տեսակների փոխներդաշնակության պայմաններում: Արժեքային համակարգը քայքայվում է, հասարակական կյանքում քաոս է տիրում, եթե կառավարման այդ տեսակները հանդես են գալիս մաքրազտված վիճակում, եթե իշխանական հարաբերությունների արժեքավորման սկզբունք է դառնում դրանցից միայն մեկը.

3. հասարակաքաղաքական երևույթները կապի մեջ ընկալելու հնարավորություն: Ի տարբերություն առասպելամտածողության, որտեղ աշխարհը արժեքակարգված է ցեղի հավաքական էությունը բացահայտող իշխանական հարաբերությունների մեջ, մշակութային այս փուլում այն համակարգվում է իշխանություն իրականացնող «Ես»-ի կողմից, որը արժեքավորում է իշխանության բարձրագույն ձևը՝ պետականը:

Հայ քաղաքական մտքի պատմության մեջ քերթողահայր Մ.Խորենացին այս ամենը հանրագումարեց որպես սոցիոմշակութային օրինաչափություն, որի չիմացությունն ու անտեսումն էլ դարերով հարատևող քաոս ստեղծեց հայ հասարակության կյանքում:

---

[16] *Մովսէս Խորենացի*. Պատմութիւն հայոց, I, 3: